ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 40-ԱՄՅԱԿԻՆ

Այս տարի սովետական ժողովուրդը աշխարհի առաջադեմ ողջ մարդկության հետ միասին հանդիսավորությամբ նշելու է Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի դեմ սովետական ժողովրդի տարած փառապանծ հաղթանակի 40-ամյակը։ Այդ տարելիցին էր նվիրված ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի կազմակերպած գիտական նստաշրջանը, որը կայացավ մարտի 5-ին։

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։

«Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակի համաշխարհային-պատմական նշանակությունը» թեմայով զեկուցում կարդաց ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը։ Նա իր ելույթում նշեց, որ մարդկային պատմության մեջ այդ ամենաարյունահեղ պատերազմում Սովետական Միությունը պաշտպանեց իր սոցիալիստական նվաճումները, առաջավոր հասարակարգը, ազատությունն ու անկախությունը։ Հայրենական մեծ պատերազմի ելքը վճռող հիմնական մարտերը տեղի ունեցան սովետական ճակատում, որտեղ հիտլերյան բանակը ունեցավ ամենամեծ կորուստը։ Կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը, միլիոնավոր սովետական զինվորներ անմիջականորեն մասնակցեցին եվրոպական տասնմեկ և Ասիայի երկու երկրների ազատագրմանը։ Հայրենական մեծ պատերազմը ակնառու ցույց տվեց, որ աշխարհում չկա մի այնպիսի ուժ, որ հաղթի սովետական ժողովրդին, սոցիալիզմին։ Պատերազմի ընթացքում աշխարհի առաջավոր մարդիկ հույսով նայում էին Սովետական Միությանը որպես մի ուժի, որը կարող է փրկել մարդկությանը ֆաշիստական ստրկությունից։ Այնուհետև Գ. Ղարիբջանյանն ասաց, որ անգնահատելի է սովետական ժողովրդի հաղթանակի համաշխարհային-պատմական նշանակությունը, հաղթանակ, որը էլ ավելի ամրապնդեց մեր հայրենիքի հզորությունը, հեղինակությունը, արագացրեց իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը։ Սովետական փառապանծ զինված ուժերի և ժողովրդի տարած մեծ հաղթանակը բարենպաստ պայմաններ ստեղծեց Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում ժողովրդադեմոկրատական հեղափոխության հաղթանակի համար։ Վերջում զեկուցողը նշեց, որ հաղթանակի կարևոր հետևանքը պատերազմի վերջում և հետպատերազմյան առաջին տարիներին հեղափոխական շարժման հզոր ալիքն էր, որը հանգեցրեց համաշխարհային սոցիալիստական սիստեմի ստեղծմանը։

«Հայրենական մեծ պատերազմի թեման հայ մատենագիտության մեջ» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Խ. Ալեքսանյանը։ Թեև ահեղ մարտերի համազարկերը լռել են 40 տարի առաջ, նշեց զեկուցողը, սակայն պատերազմը հուշ չի դարձել։ Տարեցտարի ստվարանում է պատմական այդ մեծ իրադարձության վերաբերյալ ստեղծվող գրքերի, մենագրությունների, հուշագրությունների, հոդվածների, ակնարկների ու վավերաթղթերի ծավալը։ Միաժամանակ առանձնահատուկ նշանակություն է ստանում այդ հրատարակությունների մատենագիտական համահավաք տեսք տալը։ 1975 թ. Հայրենական մեծ պատերազմի վերաբերյալ հրատարակված մոտ 300 մատենագիտական անուն-միավոր պարունակող ժողովածուին կհաջորդի Գիտական ինֆորմացիոն կենտրոնի մատենագիտության բաժնի կազմած ավելի ընդարձակ ու փաստալից մատենագիտական ժողովածուն՝ շուրջ 1600 մատենագիտական անուն-միավոր պարունակությամբ, որը լույս կըտեսնի մեծ հաղթանակի 40-ամյակի նախօրյակին։

«Սովետահայ գրականագիտությունը Մեծ Հայրենականին նվիրված գեղարվեստական արձակի մասին (գիտավերլուծական տեսություն)» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Գ. Մելքոնյանը։ Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից, ասաց նա, մեր գրողները մեծ պատասխանատվությամբ մոտեցան պատմական այդ արյունալի իրադարձությանը և մամուլում, ապա առանձին գրքերով անդրադարձան ժողովրդական հերոսապատման գեղարվեստական տարեգրությանը։ Գրական քննադատությունը գնաց այդ տաք հետքերով և լույս տեսան գրախոսականներ ու հոդ-

վածներ, իսկ պատերազմից հետո թեմայի գիտական մշակմանը ձեռնամուխ եղան գրականագետները։ 50-ական թվականներից սկսած զարգացման նոր հունի մեջ մտավ սովետահայ պատերազմական արձակագրությունը։ Լույս տեսան մի շարք վեպեր ու վիպակներ, պատմվածքների և ակնարկների ժողովածուներ։ Շարունակելով դեռևս պատերազմի տարիների գրական քննադատության ձեռքբերումները, գրականագիտությունը խորացրեց թեմայի մշակումը և այն դարձրեց ավելի բազմաճյուղ։ Դա հատկապես նկատելի էր Ս. Աղարաբյանի, Ս. Մանուկյանի, Ս. Սարյանի, Զ. Ղուկասյանի, Ս. Արզումանյանի, Գ. Հայրյանի, Լ. Կիրակոսյանի և այլոց աշխատություններում։ 60—70-ական թվականներին, երբ պատերազմական թեման սերտորեն բաղեղվեց արդիականության կենսական երևույթներին, վերջում ասաց զեկուցողը, մեր գրականագետները ավելի շատ ուշադրություն հատկացրեցին արձակագրության գեղարվեստական ձեռքբերումներին, մասնավորապես կառուցվածքային, կերպարային և լեզվաոճական յուրացումներին։

Նստաշրջանում նաև ելույթ ունեցան պատերազմի վետերաններ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Պ. Սիմոնյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ն. Հովհաննը։

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ